«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ներառական կրթության իրականացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում

ԱՌԱՐԿԱ Ֆիզիկա

ՀԵՂԻՆԱԿ Հորոդյան Լիլիթ Թադևոսի

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայրենյացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն…….….…...3

Գլուխ 1 Ներառական կրթության իրականացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում

1.1 Ներառական կրթությունը Հայաստանում……4

1.2 Ներառական կրթության առավելություններն ու դժվարությունները……...12

1.3Ներառական կրթությամբ երեխաների հոգեբանական ադապտացիան միջին դպրոցում…….13

Եզրակացություն…….…...18

Գրականության ցանկ……19

.

Ներածություն

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներն առաջ են բերում նաև կրթական արժեքների, մանկավարժի անձնային և մասնագիտական կայացման գործընթացի վերափոխուները: Այդ բարեփոխումներն կապվում են, առաջին հերթին, ապագա մանկավարժների ուսումնամասնագիտական դրդապատճառների համարժեք ձևավորման հետ:

Հայաստանի ավանդական կրթական համակարգում այս կամ այն շեղում ունեցող երեխաները ստանում էին կրթություն հատուկ կրթական հաստատություններում, տանը կամ տուն-ինտերնատներում, սակայն վերջերս Հայաստանում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. փոխվեց հասարակության վերաբերմունքը առողջական խնդիրներ ունեցող և հատուկ պայմանների կարիք ունեցող (Կ.Ա.Պ.Կ.ՈՒ.) երեխաների նկատմամբ:

Արդեն ժամանակն է հասկանալու, որ յուրաքանչյուր երեխայի համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ զարգացման համար՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար:

Ուսումնասիրության արդիականությունը պայամանվորված է նաև ժամանկակից կրթական բարեփոխումների փուլում ապագա մանկավարժների ուսումնական դրդապատճառների սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ներառական կրթության իրականացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում:

Աշխատանքի խնդիրներն են ներկայացնել ներառական կրթության համակարգը Հայաստանում, ներառական կրթության առավելությունները և դժվարությունները, ինչպես նաև ներառական կրթությամբ երեխաների հոգեբանական ադապտացիան միջին դպրոցում:

Գլուխ 1 Ներառական կրթության իրականացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում

1.1 Ներառական կրթությունը Հայաստանում

Ժամանակակից սոցիալական, հոգեբանա-մանկավարժական հետազոտություն-ները հաստատում են այն փաստը, որ ներկայումս բազմաթիվ կենսագենետիկ, սոցիոգենետիկ և հոգեգենետիկ գործոնների ազդեցության հետևանքով ավելի են շատացել զարգացման և վարքի շեղումներով երեխաները:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերևս, թաքցնում է կրթական ներառում երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները: Ավելին, ներառական կրթությունը դպրոցներում և համայնքներում հավուր պատշաճի ներդնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականություն մշակողները, համալսարանները, դպրոցները, հասարակական կազմակերպությունները, ծնողները և այլ մասնակիցները ներգրավվեն գործընթացի մեջ:[1]

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է

[1] Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, Երևան, 2019, էջ 4:

ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը (ֆրանս. Inclusif –ներփակված, լատ.include- ներառված), կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:[2]

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները: Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

- երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց,
- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է բոլոր երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,
- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,
- ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

[2] http://parents.disabilityinfo.am/inclusive-education/

Պետք է հիշել՝

– ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,

– բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,

– կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդամություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Միայն

ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:[3]

Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին: Օրենքում ամրագրված է, որ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով»:

ՀՀ-ում ներառական կրթության համակարգի ներդրումն ընթացել է մի քանի փուլերով: Ինչպես արդեն նշվեց ՆԿ օրենսդրական հիմքերը ձևավորվել են 2005թ-ին: Սակայն ՆԿ փաստացի իրականացումը սկսել է դեռևս 2001թ-ին, երբ կրթության պետական լիազոր մարմնի, Երևանի թիվ 27 միջնակարգ դպրոցի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, որի համաձայն դպրոցը ճանաչվեց հանրապետությունում ներառական կրթություն իրականացնող առաջին հանրակրթական հաստատությունը:[4]

Ներառական կրթության շնորհիվ մտավոր և ֆիզիկական զարգացման շեղումներ ունեցող երեխաները հնարավորություն են ունենում սովորել հանրակրթական դպրոցներում ոչ հաշմանդամ երեխաների հետ համատեղ:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Հատուկ կարիք ունեցող երեխաների հոգեկան զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրմամբ, նրանց կրթության և դաստիարակության հարցերով լրջորեն զբաղվել է նշանավոր գրող և մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանը: Նրա կարծիքով այդ երեխաների կրթումն ու դաստիարակությունը, նրանց նկատմամբ հատուկ ուշադրությունը մեծ նշանակություն ունեն ոչ միայն հենց այդ երեխաների, այլև ամբողջ հասարակության

[3] http://parents.disabilityinfo.am/inclusive-education/
[4] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Երևան, 2013, էջ 24:

դաստիարակության համար, քանի որ «եթե մարդկային ցեղի մեջ թշվառություն չլիներ, ապա և ոչ կարեկցության զգացմունք կլիներ»:

Հանրակրթական համակարգին զուգընթաց հատուկ կրթության բարեփոխման ծրագիրը ևս հիմնված է հիմնարար երկու՝ կրթության մատչելիության և որակի սկզբունքի վրա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսանկյունից դա ենթադրում է հավասար պայմանների ստեղծում և նրանց կարիքին համապատասխան՝ որակյալ կրթության հնարավորություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Հատուկ հաստատությունների համակարգի բարեփոխումները նպատակ ունեն.

- կատարելագործելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և խնամքի համակարգերը,
- նպաստելու գիշերօթիկ հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելուն,
- կանխարգելելու հատուկ հաստատություններում ընդգրկված երեխաների թվի աճը:

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ուղղություններն են.

- հատուկ հաստատությունների համակարգի կառուցվածքային բարեփոխումներ,

- հատուկ հաստատությունների ղեկավարման և ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխում,
- հատուկ հաստատություններում իրականացվող ծառայությունների ապակենտրոնացում,
- հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավում,

հատուկ հաստատությունների ընդունելության համակարգի կատարելագործում:

Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Այն նաև կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հատուկ կարիքներով երեխաների ընդունումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդիկաներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:[5]

Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինի հատուկ հմտություններ: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը բոլոր երեխաներին (այդ թվում նաև սահմանափակ հնարավորություններ ունեցող) որակյալ կրթություն տալու համար:

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը:

Հասարակության մեջ սահմանափակ հնարավորություններ ունեցողների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված:

Պատճառներն են՝ տեղեկատվության և հատուկ կարիքներով մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը

[5] https://www.unicef.org/

կոտրելը բավական դժվար է: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ երեխաները բարենպաստ մթնոլորտում ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները:

Այս ծրագիրն օգտակար է բոլորի համար: Սահմանափակ հնարավորություններ չունեցող երեխաները օգուտ կստանան այդպիսի շփումից: Դեռևս վաղ հասակից նրանք կսովորեն ավելի համբերատար լինել կրթական հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ, որի արդյունքում կբարձրանա նրաց սոցիալական պատասխանատվությունը:

Ներառական կրթությունը կնպաստի աղքատության պատճառով առաջացող օտարման կամ բացառման երևույթների վերացմանը:

Հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են: Հատուկ կարիքներով, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին, ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին, օգնում է նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինել ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Հանրակրթական դպրոցներում ներառական կրթությունը նպաստում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ուսման արդյունավետության և որակի բարձրացմանը:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է.

- բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում,
- դպրոցական՝ ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում,
- դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում աշակերտների բազմազանությանը,
- ուսուցման ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամներով և հատուկ կրթական պահանջ ունեցողներով),

- խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռք բերում, որը կոչված է ապահովելու որոշակի աշակերտների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ աշակերտների համար ավելի մեծ փոփոխությունների ակնկալիքներով,
- աշակերտների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու աշակերտների իրավունքի գիտակցում,
- ինչպես աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում,
- համայնքային արժեքների կայացման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում,
- դպորցների ու համ
- այնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում,

կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառման գործընթացը հանդիսանում է իր յուրաքանչյուր մասնակցի ակադեմիական և հասարակական կյանքի բարձրացման աստիճան և հանդես է գալիս դպրոցում տեղի ունեցող բոլոր գործընթացներում սովորողների ակտիվությունն ապահովող միջոց:

Ներառման միջոցով վերակառուցվում է դպրոցի մշակույթը, նրա ներքին կանոնները, կանոնակարգերը և պրակտիկան և հնարավորություն ստեղծում լիարժեքորեն ընդունել սովորողների՝ իրենց յուրահատուկ առանձնահատկություններով և կարիքներով հանդերձ:

Բավարարելու համար մարդկանց զանազան կրթական պահանջներ ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխություններն ավելի արդյունավետ դարձնեն ուսուցումը, ապա կշահեն ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները երեխաները:

Ներառումը անմիջականորեն առնչվում է ոչ միայն խոցելի խմբին (ինչպիսիք են հատուկ կրթության կարիք ունեցող երեխաները), այլ նաև դպրոցում սովորող բոլոր երեխաներին: Այն ենթադրում է սերտ, ընկերության վրա հիմնված հարաբերություններ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների և դպրոցի ու համայնքի միջև (որտեղ այդ դպրոցները կան և գործում են):

1.2 Ներառական կրթության առավելություններն ու դժվարությունները

Ի՞նչու է անհրաժեշտ սահմանափակ կարողություններով երեխաներին ներառել հանրակրթական դպրոցում և ի՞նչով է դա արդարացված: Խորհրդային տարիներին հաշմանդամներն ամբողջությամբ մեկուսացված էին հասարակությունից: Երեխաները հիմնականում պահվում էին համապատասխան հաստատություններում: Այնինչ, երեխաների մեկուսացումը դադաղեցնում է նրանց ֆիզիկական, հուզական, իմացական զարգացումն ու հասունացումը: Իսկ փորձը հաստատում է, որ հաշմանդամ երեխաների շրջապատում, ավելի արագ են ինտեգրացվում, քան ապրելով մեկուսացված միջավայրում կամ էլ իր նմանի հետ: Նրանք դառնում են ավելի վստահ ու անկաշկանդ, քան հատուկ գիշերօթիկներում կրթված երեխաները:

Փորձը ցույց է տալիս, որ սահմանափակ ունակություններով երեխայի համար հիվանդության ախտորոշման և այլ դիտարկումների վրա պետք է մշակվի անհատական ծրագիր: Բայց, ամեն դեպքում, մտավոր զարգացման շեղումներ չունեցող երեխաները հանրակրթական դպրոցներում հատուկ պայմանների ստեղծման դեպքում կարող են իրենց հասակակիցների նման սովորել, հաղորդակցվել և զարգանալ:

Սակայն, սա հարցի միայն մի կողմն է: Ներառական կրթության իրականացումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Անհրաժեշտ է ոչ միայն հասարակության մտածողության վերափոխում, այլև հանրակրթական դպրոցներում որոշակի պայմանների ստեղծում: Օրինակ՝ անվասայլակ օգտագործող երեխաների համար անհրաժեշտ է դպրոցի ներսում ստեղծել հատուկ թեքահարթակներ կամ

վերելակներ: Բացի այդ, փորձը ցույց է տվել, որ հանրակրթական ծրագրերը բարդ են այդ երեխաների համար: Համեմատաբար թույլ է նրանց հիշողությունը և ընկալման կարողությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել նաև հատուկ հեշտացված ծրագիր:

Հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաների կրթելու դժվարությունը կայանում է նրանում, որ նրանց մոտ համեմատաբար թույլ է հիշողությունը և գիտելիքը յուրացնելու ունակությունը: Ոչ մի դեպքում չի կարելի ստիպել կամ շտապեցնել նրանց:

Հաշմանդամ երեխաների ուսուցման գործում թեպետ անուղղակի, բայց կարևոր ներդրում ունեն նաև նրանց համադասարանցիները: Դասարանի կարծիքը շատ մեծ ազդեցություն ունի նրանց վրա: Եթե նույնիսկ հաշմանդամ երեխաները հատուկ գիշերօթիկ հաստատություններում շրջապատված են մասնագետներով, համապատասխան խնամքով, միևնույնն է, իրենց շուրջը հիվանդություն են տեսնում:

Առանց այս խնդիրների լուծման ներառական կրթություն իրականացնելն անիմաստ է և անօգուտ:

1.3 Ներառական կրթությամբ երեխաների հոգեբանական ադապտացիան միջին դպրոցում

Ներառական կրթության ներմուծումը հանրակրթական դպրոցներ մեծ փոփոխության է ենթարկում նաև մանկավարժի աշխատանքը: Հոգեբանական հարմարման տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված հատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտին մանկավարժների, աշակերտների և ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները:

Ներառական կրթության առաջնային խնդիրներից մեկը մասնագետների անբավարար պատրաստվածությունն է: Այսպիսով, ներառական կրթության

ներմուծման խնդիրը հակասություն է առաջացնում. մի կողմից՝ անհրաժեշտ է արագ ներդնել ներառական կրթությունը դպրոցում, իսկ մյուս կողմից՝ չունենք ներառական կրթության ինտեգրմանը պատրաստ մանկավարժներ: Գիտական գրականության մեջ «պատրաստվածություն» ասպեկտը քննարկվում է տարբեր հայեցակարգերով: Վ. Ա. Կրուտեցկին սահմանում է «պատրաստվածությունը» ինչպես գործունեության պիտանիություն՝ արտահայտված ակտիվ և դրական վերաբերմունքով, դրանով զբաղվելու հակումով, որն անցնում է զարգացման բարձր մակարդակի՝ դառնալով տարվածություն:

Մանկավարժի մասնագիտական գործունեությանը անձի պատրաստվածությունը ենթադրում է 3 հիմնական տեսակի առանձնացում՝ ֆիզիկական, հոգեբանական և հատուկ: Ֆիզիկական պատրաստվածությանը չենք անդրադառնա, քանզի հոգեբանամանկավարժական գործունեության մեջ անձին չեն ներկայացվում հատուկ ֆիզիկական պահանջներ (բացառությամբ՝ հասարակայնորեն ընդունված նորմերը և պահանջները): Ըստ հոգեբանների, մանկավարժական գործունեության մեջ էմոցիոնալ ընդունումն ունի մասնագիտական «արգելք», մանկավարժը հոգեբանորեն չի ընդունում այն երեխային, որի ուսուցման հաջողության մեջ վստահ չէ: Մանկավարժը չգիտի, թե ինչ եղանակով ստուգի գիտելիքները: Զգայական խանգարումներով երեխաների դեպքում առաջանում է նաև «չհասկանալու» արգելքը: Առավել մեծ դժվարություն են ներկայացնում այն երեխաները, որոնք ունեն ինտելեկտի խախտում: Նրանք ակնհայտորեն չեն կարող յուրացնել հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագիրը, նրանց համար անհրաժեշտ է հատուկ ուսումնական, անհատական ծրագրի օգտագործում, որը հանրակրթական դպրոցի մանկավարժի համար չափազանց դժվար է: Նրանց հետ աշխատանքում պետք է հաշվի առնել կրթական նպատակները, այլ ոչ թե ակադեմիական արդյունքները:

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար հարկավոր է կազմակերպել հատուկ մեթոդական աշխատանքային ուսուցում և այս երեխաների սոցիալ-մշակութային ադապտացումը հասարակությանը: Ուսուցիչները, որոնք ունեն ներառական կրթական համակարգում աշխատելու արդյունավետ փորձ, առաջարկում են ներառելու հետևյալ եղանակները.

1. կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին ընդունել այնպես, «ինչպես մնացած բոլոր երեխաներին դասարանում»,

2. ընդգրկել նրանց նույն գործունեության մեջ, սակայն նրանց առաջ դնել տարբեր խնդիրներ,

3. ներգրավել երեխաներին խմբային աշխատանքներում,

4. օգտագործել ակտիվ ուսումնական ձևեր և խաղեր, ծրագրեր, հետազոտություններ դպրոցից դուրս:

Մանկավարժի պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում ունի երկու հիմնական ցուցանիշ՝ մասնագիտական պատրաստվածություն և հոգեբանական պատրաստվածություն. «Մասնագիտական պատրաստվածություն» հասկացությունը դիտարկվում է որպես տեսական գործունեության և հասկացության կատեգորիա, մի կողմից՝ որպես գործընթացի

Ներառումը նախ և առաջ պետք է ստեղծի բարոյական, նյութական և մանկավարժական միջավայր՝ յուրաքանչյուր երեխայի կրթական պահանջներին համապատասխան: Եվ դա հնարավոր է իրականացնել ծնողների հետ սերտ համագործակցման դեպքում, այսինքն, թիմային աշխատանքի շնորհիվ:

Ներառական կրթության իրականացման առաջնային և կարևորագույն խնդիրներից է հանդիսանում կրթական համակարգի մասնագետների հոգեբանական և արժեքային համակարգի փոփոխությունը և մասնագիտական կոմպետենտությունը:

Ներառական կրթության զարգացման արդեն իսկ առաջին փուլից հանրակրթական դպրոցի ուսուցիչների մոտ անմատչելիության սուր խնդիր է առաջանում հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու:

Ուսուցիչների մոտ բացահայտվում են ներառական միջավայրում աշխատելու մասնագիտական կոմպետենտության թերություններ, ինչպես նաև հոգեբանական արգելքներ և մանկավարժի մասնագիտական կարծրատիպերի առկայություն:

Հանրակրթական դպրոցի մանկավարժների կարևորագույն խնդիրն է՝ կարողանալ աշխատել կրթական տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների հետ և հաշվի առնելով նրանց յուրահատկությունները՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել հատուկ մանկավարժական մոտեցում:

Ներառական կրթության ներմուծումը դպրոց մեծապես փոխում է ուսուցչի դերը:

Ուսուցիչները աշակերտների հետ ներգրավվում են տարաբնույթ շփումների մեջ, ինչի շնորհիվ էլ ճանաչում են յուրաքանչյուրին անհատապես: Բացի այդ մանկավարժները դպրոցից դուրս ներգրավված են ավելի լայն սոցիալական շփումների, որոնց թվին են պատկանում սոցիալական աջակցության ռեսուրսները և ծնողների հետ շփումը: Նման մասնագիտական դիրքորոշումը ուսուցիչներին թույլ է տալիս հաղթահարել իրենց մտահոգությունը և անհանգստությունը, հասնել մասնագիտական հմտության միանգամայն նոր մակարդակի՝ հասկանալով իր աշակերտներին և իր կոչումը:

Մանկավարժի պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում ունի երկու հիմնական ցուցանիշ՝ մասնագիտական պատրաստվածություն և հոգեբանական պատրաստվածություն.

Մասնագիտական պատրաստվածության կառուցվածքը.

- Տեղեկատվական պատրաստվածություն,
- Մանկավարժական համապատասխան տեխնոլոգիաների տիրապետում,
- Գիտելիքներ հոգեբանության հիմունքներից և ուղղիչ մանկավարժությունից,
- Գիտելիքներ երեխաների անհատական տարբերությունների մասին,
- Պատրաստակամություն վերափոխելու ուսուցման գործընթացի ողջ պրոցեսը,
- Պատրաստակամություն մասնագիտական համագործակցության և ուսուցման:

Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը խնդրի հաջող լուծման հիմքն է, որն իր մեջ ներառում է բոլոր անհրաժեշտ և բավարար առաջիկա գործողությունների տարրերը: Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը հանդիսանում է պարտադիր պայման ոչ միայն այն սկսելու, այլև արդյունավտ լուծման: Հասկանալով հոգեբանական պատրաստվածության կարևորությունը որպես արդյունավետ գործունեության հիմք՝ ստեղծվել է մասնագիտական պատրաստվածության պրակտիկան:[6]

Հոգեբանական պատրաստվածության ձևավորման գործընթացում իր ուրույն տեղ ունի դրդապատճառային բաղադրիչը, որն հանդիսանում է այսպես ասած «կրթության ուղեցույց», քանզի առանց դրդապատճառի հնարավոր չէ և ոչ մի

[6] Գրիգորյան Մ.Ա, Ներառական կրթության մեթոդաբանական մոտեցում, էջ 5:

գործունեության իրականացում, նույնիսկ մեծ ծավալով գիտելիքների յուրացման և հմտությունների ձևավորման դեպքում:

Հոգեբանական պատրաստվածության կառուցվածքը.

- Տարաբնույթ զարգացման խախտում ունեցող երեխաների էմոցիոնալ ընդունում;
- Պատրաստակամություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներառելու դասապրոցեսին;
- Բավարարվածություն իրենց իսկ կատարած մանկավարժական գործունեությունից:

Հոգեբանական պատրաստվածությունը ներառում է իր մեջ գործունեության բոլոր անհրաժեշտ տարրերը, որոնք անհրաժեշտ են տվյալ խնդրի հաջող լուծման համար:

Հոգեբանական պատրաստվածության տարրերից մեկն է հանդիսանում պահանջմունքի գիտակցումը:

Ուսումնական գործունեությունում ներառական կրթությունը իր ուրույն տեղը կգտնի միայն այն ժամանակ, երբ այն դառնա ուսուցիչների մասնագիտական մտածողության մի մասը: Հարկավոր են հատուկ ջանքեր, որ այն տեղի ունենա:

Ներառական կրթության ինտեգրման փորձը ցույց է տալիս, որ ներառական կրթություն իրականացնող մանկավարժները և առհասարակ այլ մասնագետներ ևս միանգամից չեն ընկղմվում իրենց մասնագիտական նոր դերի մեջ: Նրանք անցնում են մի քանի փուլերով՝ սկսած բացահայտ կամ թաքնված դիմադրությունից, անցում են կատարում կատարվելիքի պասիվ, իսկ հետո նաև ակտիվ ընդունման:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային և ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Չնայած որ, ոչ բոլոր հաշմանդամություն ունեցող (անկախ դրա դրսևորման ձևից) անձիք են, որ հնարավորություն ունեն սովորել հանրակրթական դպրոցներում:

Եզրակացություն

Ներառական կրթությունը մատչելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Այն ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման, որպեսզի բավարարի մարդկանց զանազան կրթական պահանջները: Ներառական կրթությունը ձգտում է մշակել մեթոդաբանություն, որը նպատակաուղղված է ընդունելու այն, որ բոլոր երեխաները անհատներ են՝ ուսուցման տարբեր պահանջմունքներով:

Ներառական կրթության առաջնային խնդիրներից մեկը հանդիսանում է մասնագետների անբավարար պատրաստվածությունը: Շատ դպրոցի մանկավարժներ դեռևս պատրաստ չեն աշխատելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ:

Այսպիսով, ներառական կրթութան ներմուծման խնդիրը գալիս է հակասության՝ մի կողմից անհրաժեշտ է արագ ներդնել ներառական կրթությունը դպրոցում, իսկ մյուս կողմից չունենք ներառական կրթության ինտեգրմանը պատրաստ մանկավարժներ:

Ներառական կրթության կազմակերպման գործընթացը բարդ, բազմակողմանի գործընթաց է, որը սերտորեն կապված է ժամանակակից կրթության համակարգում իրականացվող գիտական, մեթոդական, սոցիալական և կազմակերպչական վերակառուցումների հետ: Ներառական կրթությունը կապված է բարոյական արժեքների մակարդակի փոփոխության հետ: Ժամանակակից դպրոցում այն կազմակերպելու խնդիրը առաջին հերթին նրանում է, որ դպրոցը՝ որպես սոցիալական ինստիտուտ, համապատասխանում է այն երեխաներին, որոնք ունակ են ընկալելու նախատեսված ստանդարտ ծրագրերը և որոնց համար բավարար են մանակավարժական աշխատանքի տիպական մեթոդները:

Այսպիսով, որքան վաղ սկսվի առողջության սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների հետ աշխատանքը, այնքան սոցիալականցվելու նրա հնարավորությունները կմեծանան: Դա պայմանավորված է ոչ միայն մարդասիրական դրսևորումներով, այլև վաղ իրականացվող վերականգնողական-մարդասիրական աշխատանքի արդյունավետությամբ, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու համար:

Գրականության ցանկ

1. Կրթություն բոլորի համար, Դակարի գործողությունների շրջանակ, Դակար, 2010:
2. Ներառական կրթության գաղափարախոսություն: Վերապատրաստման ծրագիր, Երևանի ԲՀՄ գնահատման կենտրոն, 2014:
3. Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, Երևան, 2019, 252 էջ:
4. Ներառական կրթություն (Վերապատրաստման դասընթացների բովանդա կային նյութերի փաթեթ), 2008:
5. Ներառման ուղեցույց «Կրթություն բոլորի համար», ՅՈՒՆԵՍԿՕ, 2005:
6. Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները, Մ.Մարդանյան, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, էջ 204-208;
7. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Երևան, 2013
8. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
9. www.unicef.org
10. http://parents.disabilityinfo.am/inclusive-education/